

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԿԳՄՍ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱՔՐԱՅԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ**

Հ երթակ ան ատե ս տավ ո ռ մ ան Ե ն թ ա կ ա
ո լ ս ո լ ց ի չ ն ե թ ի վ ե ռ ա պ ա տ ը ա ս տ ո լ մ

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

ԹԵՄԱ՝ Գիտելիքների և կարողությունների
պարտադիր նվազագույն պահանջների յուրացման
ապահովումը սովորողների կողմից խճանկար մեթոդի
միջոցով:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբունյան

ՈԼՍՈՒՑԻՉ՝ Աննա Հարությունյան

ԴՊՐՈՑ՝ Արծվանիստի միջնակարգ դպրոց

Մարտունի 2022թ

Բովանդակություն

1. Ներածություն	3
2. Գրական ակնարկ	9
3. Փորձարարական հետազոտություն	
3.1 Խմբի նկարագիրը	15
3.2 Փորձարարական դասեր	
3.2.1 Փորձարարական դաս - 1	17
3.2.2 Փորձարարական դաս - 2	18
3.2.3 Փորձարարական դաս - 3	20
4. Եզրակացություններ	2
2	
5. Օգտագործված գրականության ցանկ	25
6. Հավելվածներ	26
• Դասալսակ - 1	26
• Դասալսակ - 2	30
• Դասալսակ - 3	34
• Թեստային աշխատանք - 1	38
• Թեստային աշխատանք - 2	39

Ներածություն

Դպրոցական աշխարհագրությունը ունի բացառիկ կրթական եւ դաստիարակչական նշանակություն: Աշխարհագրությունը, ուսումնասիրելով տնտեսական երևույթները եւ հասարակական գործընթացները, դրանց տարածական տեղաբաշխումը եւ փոխազդեցությունները, ընդլայնում է սովորողների աշխարհայացքը, մտահորիզոնը՝ այդ երևույթներին եւ գործընթացներին տալով գիտական բացատրություն:

Յուրաքանչյուր առարկա, դասընթաց, այդ թվում աշխարհագրությունն իր ավանդն ունի սովորողների կրթության, դաստիարակության, գիտական աշխարհայացքի ձեւավորման գործում: Միայն աշխարհագրությունն է տալիս **գիտական** ու **ճանաչողական** գիտելիքներ բնության երևույթներին ու տարրերի մասին:

Աշխարհագրության ուսուցման գործընթացը սահմանում է **երեք բաղադրամասերի** փոխկապված ու փոխադրմանավորված, մեկը մյուսին լրացնող ու միմյանց վրա փոխներգործող ամբողջություն: **Այդ բաղադրամասերն են՝**

- 1) առարկայի բովանդակությունը,
- 2) ուսուցչի համալիր գործունեությունը՝ ղեկավարել, սովորեցնել, դաստիարակել
- 3) աշակերտի սովորելը:

Ուստի աշխարհագրությունն ուսումնասիրելու ընթացքում ուսուցումը և դաստիարակությունը որպեսզի համընթաց ընթանան, անհրաժեշտ է որոշակի պահանջներ ներկայացնել նշված բաղադրամասերից յուրաքանչյուրին և դրանց փոխադարձ գործողություններին (2):

Մեր օրերում հայ դպրոցը կանգնած է բարեփոխումների շեմին: Նրա առջև ծառայած են բազմաթիվ չլուծված **խնդիրներ`**

- 1) ապահովել աշակերտների պատրաստվածությունը մեծ կյանք մտնելու,
- 2) տալ համակողմանի եւ կայուն գիտելիքներ,
- 3) ձեւավորել գիտական աշխարհայացք,
- 4) ապահովել ֆիզիկական, գեղագիտական եւ բարոյական դաստիարակություն:

Աշխարհագրության դասընթացը հանրակրթական դպրոցի հենքային առարկաներից է: Իմ խորին համոզմամբ յուրաքանչյուր ժողովրդի ներկայացուցիչ պարտավոր է իմանալ իր մայր լեզուն, գրականությունը, մշակույթը, պատմությունը և աշխարհագրությունը: Այդ համատեքստում ուսումնասիրելով աշխարհագրությունը` աշակերտները ծանոթանում են աշխարհի երկրների, այդ թվում` մեր հանրապետության բնությունը, բնակչությունը և նրանց տնտեսական գործունեությանը (2):

Ի տարբերություն ուսումնական մյուս առարկաների` պատմություն, ֆիզիկա, կենսաբանություն և այլն, աշխարհագրությունը բնությունը դիտարկում է որպես մեկ համալիր` ամբողջություն, որում երեւույթներն ու օբյեկտները գտնվում են սերտ կապի ու զարգացման մեջ, փոխազդում և փոխներգործում են միմյանց վրա: Աշխարհագրությունը ուսումնասիրում է աշխարհի բնական համալիրների բազմազանությունը և դրանց տեղաբաշխման օրինաչափությունները, դրանց տարբերությունների պատճառները (2):

Ոչ մի դասընթաց այնպես չի անդրադարձնում բնակչության, բնության եւ տնտեսության գործունեության միջև եղած կապերին, ինչպես աշխարհագրությունը, որի արդյունքում առաջացել են բնական համալիրների վերափոխման խնդիրներ,

որի ուսումնասիրմամբ եւ լուծման հարցերով զբաղվում են ,Բնօգտագործում եւ ,Բնապահպանություն եւ դասընթացները (2):

Փաստորեն աշխարհագրության դասընթացի **խնդիրն** է դարձել

- 1) ձեւավորել և ամրապնդել սովորողների գիտական հայացքները բնության և հասարակության երևույթների ու օբյեկտների վերաբերյալ ,
- 2) բացահայտել դրանց գոյության ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները
- 3) բնության և բնակչության տնտեսական գործունեության միջեւ եղած կապերի բացահայտումը ,
- 4) ներկայացնել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում բնության նկատմամբ վերաբերմունքը , հասանելի դարձնել սովորողներին բնական միջավայրի դերը հասարակության զարգացման գործում :

Աշխարհագրության ամբողջ դասընթացը ընդգրկում է հանրակրթության բոլոր օղակները` **2-12-րդ դասարանները**: Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված` սովորողների մոտ ձևավորում է գիտական հայացքներ բնության երևույթների և հասարակական կյանքի առանձին երևույթների վերաբերյալ : Աշխարհայացքի բաղադրիչներից է նաև աշխարհաճանաչողության մասին կարծիքները : Այդ ամենով պայմանավորված` դպրոցական աշխարհագրությունը սովորողներին ծանոթացնում է գիտական հետազոտությունների հիմնական մեթոդներին ու դրույթներին (2):

Դպրոցականները դրանց ծանոթանում են ուսուցչի կազմած գործնական աշխատանքների միջոցով : Շրջակա միջավայրում կատարվող ինքնուրույն, հետազոտական ու գործնական աշխատանքները ապացուցում են սովորողներին, որ բնության օրինաչափությունները, անկախ մարդուց, գոյություն ունեն իրականութան մեջ (2):

Այսպիսով, սովորողների շրջանում հաստատվում է այն կարծիքը, որ աշխարհագրությունը՝ որպես գիտություն, մշտապես գտնվում է դինամիկ զարգացման մեջ և անընդհատ մշակում ու կատարելագործում է հետազոտության մեթոդները:

Գիտելիքները հանդիսանում են աշխարհագրական գիտության բովանդակության գլխավոր բաղադրիչները: Առանձնացվում են գիտելիքների հետևյալ խմբերը՝

- 1) Էմպիրիկ
- 2) Տեսական

Էմպիրիկ գիտելիքների հիմքը զգայական իմացությունն է, որն արտացոլվում է **առարկան** միայն արտաքին կողմից, չբացահայտելով նրա էությունը: Էմպիրիկ գիտելիքների խմբին են պատկանում՝

- 1) Փաստերը
- 2) Պատկերացումները
- 3) Աշխարհագրական անվանակարգը

Աղյուսակ 1

Աշխարհագրական Էմպիրիկ գիտելիքների հիմնական խմբեր		
Էմպիրիկ	Չիմքում զգայական իմացությունն է:	Փորձնական եղանակով ստացված գիտելիք է, որը ձևավորվում է դիտարկման և գիտափորձի արդյունքների հիման վրա:
Փաստեր	Նյութական և հոգևոր աշխարհում կատարված և գրանցված երևույթներ:	

Աջ խարհագրական անվանակարգ կամ գեոնոմենսկլ առուրա	Աջ խարհագրական տեղանունների ցանկն է:
Պատկերացումներ	Առարկայի կամ երևույթի տեսողական պատկերն է, նրա արտաքին հատկանիշների արտացոլումը գիտակցության մեջ:

Տեսական գիտելիքները իրենց կառուցվածքով միատարր չեն: Այս խմբին պատկանող գիտելիքի տեսակները իրական պատկերացում են տալիս իրականության մեջ գոյություն ունեցող օբյեկտների և երևույթների վերաբերյալ (3):

Տեսական գիտելիքների խմբին են պատկանում`

- 1) Տեսություններն ու վարկածները
- 2) Հասկացությունները
- 3) Պատճառահետևանքային կապերը
- 4) Օրինաչափությունները

Կարողությունը գիտելիք է գործողության եղանակի մասին և գործողությունը կատարելու ունակություն է: Իր հերթին **ուսումնական կարողությունը** գործնականում սովորողի կողմից գիտակցաբար կատարվող գործողություն է արդեն ձեռք բերած գիտելիքների հիման վրա: **Աջ խարհագրական կարողությունը** աչակերտի կողմից տիրապետվող գործողության եղանակ է, որը ձևավորվում է աջ խարհագրության ուսուցման ընթացքում և կիրառվում ուսումնասիմացական նպատակով (3):

Կարողություններին ձևավորման գործընթացի օղակներն են`

- 1) Կարողության էության բացատրումն ու ցուցադրումը ուսուցչի կողմից
- 2) Նրա մասերի առանձին վերլուծությունը ուսուցչի ղեկավարությամբ
- 3) Ինքնուրույն վարժությունների կատարումը կարողության կիրառմամբ` ըստնմուշի
- 4) Կարողության կիրառումը նոր իրավիճակում

5) Ինքնաստուգում

Աշխարհագրական գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույն պահանջների յուրացման **Նպատակներն են՝**

- 1) Որպես ուսումնական առարկա, ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված պարտադիր նվազագույն մակարդակի յուրացումը:
- 2) Ապահովել սովորողների գիտելիքների և կարողությունների ևս մեկ աստիճանի զարգացումը (3):
- 3) Ապահովել սովորողների տեղանքում կողմնորոշվելու, քարտեզից օգտվելու մասին գիտելիքների և կարողությունների ձևավորմանը:
- 4) Նպաստել սովորողների մոտ գիտելիքների հիման վրանոր կարողությունների զարգացմանը:
- 5) Չարգացնել սովորողների ստացած գիտելիքների և կարողությունների կիրառմանը նոր իրավիճակում:
- 6) Նպաստել տեսական նյութի ամրապնդմանը և գործնականում կիրառմանը:

Աշխարհագրական գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույն պահանջների յուրացման **Խնդիրներն են՝**

- 1) Նպաստել սովորողների մոտ հետաքրքրության մեծացմանը մատուցվող ուսումնական նյութի նկատմամբ:
- 2) Օգտագործել հնարավորինս շատ ժամանակակից մեթոդներ, միջոցներ, սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման և կարողությունների ձևավորման նպատակով:
- 3) Տալ ինքնուրույն փնտրելու, գտնելու, վերլուծելու, և կիրառելու հնարավորությունն աովորողներին:
- 4) Ստեղծել գործնական իրավիճակներ ձեռք բերած կարողությունները կիրառելու նպատակով:
- 5) Նպաստել սովորողների մոտ ինքնավերլուծության կատարելու հատկանիշի ձևավորմանը (3):

6)

1. Գրական ակնարկ

Չամազործակցային ուսուցումը ինտերակտիվ մեթոդի մի առանձին տարատեսակ է, որն իր որոշակի առանձնահատկություներով շնորհիվ իսկզբանե առանձնացել և ստացել է համազործակցային ուսուցում անվանումը: Չամազործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն, և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով(4,5):

Չամազործակցային ուսուցման մեթոդներից է նաև **Խճանկար** մեթոդը:

Խճանկար կամ **Ջիգսո** (գերմ.՝ Gruppenpuzzle, անգլ.՝ Jigsaw technique) ուսուցման մեթոդ, որը հայտնաբերվել է 1971 թվականին Տեխասի A&M համալսարանում ամերիկացի սոցիոլոգ և հոգեբան Էլիոթ Արոնսոնի կողմից: Նպատակն էր թուլացնել ռասայական խմբավորումները բռնի կերպով ինտեգրված դպրոցներում (1,5):

Խճանկար կամ Ջիգսո մեթոդը համազործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները **խորամուխ** են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրոշմների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համազործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ ախտում են առանձին ուղղություներով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականություներ: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային ախտանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ **հարկություններից** է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություներ են կրում միմյանց ուսումնառության

համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում(1,5):

,Խճանկար մեթոդը ունի իր **նպատակները**.

- 1) Նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրել ուն՝ անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին:
- 2) Նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ ուսումնասիրել ու հնարավորություներն ընձեռնել:
- 3) Ընկերների հետ համագործակցելով՝ օգնել գտնել ու առաջադրված հարցերի պատասխանները:
- 4) Մշակել փորձագիտական կարողություններ՝ ըստ տրված նյութի ամբողջացնել ու և հաղորդել ու տեղեկատվությունը:
- 5) Հնարավորություն ստեղծել միաժամանակ դառնալ ու և սովորող և սովորեցնող:
- 6) Նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

,Խճանկար մեթոդը իրականացվում է տրամաբանորեն իրար հաջորդող հետևյալ փուլերով.

Աղյուսակ 2

Փուլը	Նկարագրությունը
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում	Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը:
Աշխատանք ուսումնական խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
Ավարտական	Աշակերտները անհատական ստուգողական են

աշխատանք	հանձնում ամբողջ թեմայից:
Ամփոփում	Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Գոյություն ունեն մեթոդի կիրառության զանազան տարբերակներ, որոնք ավելի խորը և բազմաբովանդակ են ուսումնական նյութի մատուցման համար (1,5):

Մեթոդի կիրառության **առաջին տարբերակ**.

Աղյուսակ 3

1.	Թեման բաժանել առանձին ամբողջական մասերի, հատվածների: Կարևոր է հաշվի առնել աշխատանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրել տարբեր բարդության ու հագեցվածության հատվածներ:
2.	Ստեղծել չորս-հինգ հոգուց բաղկացած համագործակցային խմբեր (նպատակային խմբեր ձևավորելիս հնարավորության դեպքում հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները):
3.	Համագործակցային խմբերում մասնակիցներին համարներ են տրվում (1,2,3,4...):
4.	Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերում (1.1,1...; 2.2,2... և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք (օրինակ՝ եթե նյութը հատվածների է բաժանվել, փորձագետների 1-ին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն):

5.	<p>Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբեր և հաշվետվություն են տալիս խմբին իրենց փորձագիտական խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում.</p> <ul style="list-style-type: none"> ✓ ներկայացվում են խմբային քննարկումների, աշխատանքների արդյունքները, ✓ աշակերտները իրենց սովորածը սովորեցնում են միմյանց, ✓ միավորվում, ամբողջանում են գիտելիքները:
6.	<p>Ամփոփիչ փուլը առաջանում է, երբ համագործակցային խմբերը 2-3 րոպեի ընթացքում ամբողջ դասարանին իրենց նախընտրած ձևով ներկայացնում են թեման:</p>

Խմբային աշխատանքների **ընթացքը** կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում սովորողներն իրենք կարող են մշակել իրենց խմբի աշխատանքային պլանը: Իսկ սա իր հերթին **սպյ մանավորված** է նրանով, թե խճանկարե մեթոդը դասի ընթացքում կամ ուսուցման մեջ ինչ տևողությամբ է կիրառվում:

- ✓ Առաջադրանքը կատարելիս աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմություններ կամ նույն հեղինակի այլ պատմվածքները կարդալ:

- ✓ Յանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել ուշադրության արժանի տարբեր ոլորտներ, օրինակ՝ **Էկոլոգիական** խնդիրներ ուսումնասիրելիս կարող են քննել **,Օգոսայիս շերտի** քայքայման ազդեցությունը բույսերի վրա, եղանակի կտրուկ փոփոխությունների հետևանքները, բնական պաշարների սպառման, մարդկանց առողջության պահպանման հարցերը:
- ✓ Առանձին հետազոտությունների առարկա կարող են դառնալ ժամանակակից մոտեցումները տվյալ հարցի վերաբերյալ:
- ✓ Աշակերտները կարող են այս մեթոդը կիրառել նաև ինքնուրույն **բնագիտական հետազոտական նախագծեր** իրականացնել ու համար: Այս դեպքում յուրաքանչյուր խումբ կամ առանձին մասնակից պատասխանատվություն է կրում կոնկրետ ոլորտի ուսումնասիրման համար:

Ուսուցիչը թեմայի ամփոփման տարբեր **հանձնարարություններ** կարող է տալ (,Ո՞րն էր ամենակարևորը, ,Յամառոտ ձևակերպե՛ք թեմայի գլխավոր գաղափարը, ,Ինչի՞ վրա խումբն առավել ագույն ուշադրություն դարձրեց...):

Բավականին հետաքրքիր է մեթոդի կիրառության **երկրորդ** տարբերակը.

Աղյուսակ 4

1.	Աշակերտները աշխատում են 4 հոգանոց թիմերով (համագործակցային խմբերով): Խմբի անդամներին տրվում են տարբեր փորձագիտական թերթիկներ: Փորձագիտական թերթիկներում գետեղված հարցերը նպատակ ունեն ուղղորդել ու տվյալ աշակերտի ընթերցանությունը:
----	---

	Թերթիկները տարբեր են, քանի որ հետագայում տարբերվելու են աշակերտների պարտականությունները: Նրանք օգնելու են հիմնական խմբին՝ համակողմանի յուրացնելու իրենց վստահված և փորձագիտական թերթիկում նշված հատվածը:
2.	Աշակերտներին տրվում է որոշակի ժամանակ՝ ամբողջ նյութը կարդալու համար: Բոլորը պետք է նյութը կարդան ամբողջությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հատվածներին, որոնք պատասխանում են իրենց փորձագիտական թերթիկում նշված հարցերին և համապատասխան գրառումներ անեն:
3.	Աշակերտները վերախմբավորվում են ըստ թերթիկների՝ կազմելով փորձագիտական խմբեր, որտեղ նրանք քննարկում են թերթիկում նշված հարցերը: Յուրաքանչյուր խմբում ընտրվում է քննարկումը վարող անձ: Ուսուցիչն այդ ընթացքում շրջում է խմբերում որպես մասնակից, անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ անում:
4.	Փորձագետները վերադառնում են իրենց նախնական համագործակցային խմբերը և ընկերներին սովորոցնում փորձագիտական խմբում յուրացրածը: Փորձագետները ոչ միայն զեկուցում, այլև պատասխանում են հարցերին և հավաստիացնում, որ բոլորը յուրացրել են տվյալ հատվածը:
5.	Վերջին քայլը գնահատումն է: Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտներին գրավոր նշել, թե ինչ ներդրում են իրենք ունեցել խմբի ընդհանուր աշխատանքում:

Մեթոդը կիրառման լայն հնարավորություններ ունի: Այն հավասարապես կարող է օգտագործվել բոլոր առարկաների դասերին: Առավել նպատակահարմար է կիրառել հատկապես ծավալուն, փաստերով ու տվյալներով հագեցած նյութերի վրա աշխատելիս: Խճանկարը հիմնականում դասի իմաստի ընկալման փուլի մեթոդ է, որը, սակայն, ներառում է նաև կշռադատման փուլը (1):

Մեթոդի **առավել ությունները**

- 1) Նյութի բազմակողմանի և ավելի խոր ուսումնասիրություն
- 2) խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը
- 3) աշակերտը հանդես է գալիս և՛ սովորողի, և՛ սովորողնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու
- 4) ժամանակի ճիշտ արդյունավետ օգտագործում
- 5) հաշվետու լինելու կարողության և անձնական պատասխանատվության ձևավորում
- 6) նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում
- 7) մոտիվացիան հետաքրքրությունների բավարարում
- 8) նոր նյութի յուրացում:

Մեթոդի սահմանափակությունները

- 1) անհրաժեշտ ռեսուրսների ոչ բավարար քանակ,
- 2) հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի և ժամանակի անհամապատասխանություն:

3 Փորձարարական հետազոտություն

3.1. Խմբի նկարագիրը

Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում ունեւմ աշակերտներ որոնց մոտ արտահայտված են առարկայի չափորոշչային պարտադիր նվազագույն պահանջներով գիտելիքների և կարողությունների յուրացման խնդիրներ: Դասերի ընթացքում կիրառելով բազմաթիվ մեթոդներ և հնարներ (գրույց, բացատրություն, դաս-դասախոսություն, երեք բանալի մեկ կողպեք, ձևագնդի) նկատում եմ, որ խնդիրը չի լուծվում, դասարանի մնացած աշակերտների համար դասանյութը հասկանալի և ըմբռնելի է, իսկ դիտարկվող աշակերտների մոտ խնդիրը լուծվելու փոխարեն ավելի է խորանում: Բացի դրանից մեկ դասաժամի կարող են մի փոքր ակտիվություն ցուցաբերել, իսկ մյուս դասաժամին ընդհանրապես լռել և ոչինչ չանել: Ես կարծես այդ դասարանում կանգնած լինեմ մեկ կետում: Առաջ գնալու, հարցը վերջնականապես լուծելու նպատակով որոշեցի տվյալ դասարանում իրականացնել հետազոտություն:

Դիտարկվող դասարանում սովորում են 20 աշակերտ, որոնցից 12-ը տղա, իսկ 8-ը աղջիկ: Աշակերտները ունեն գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ինչպես նաև դրանցով պայմանավորված առաջարկման տարբեր մակարդակներ: Աշխարհագրություն առարկան տվյալ դասարանում աշակերտները ուսումնասիրում են շաբաթական 1 դասաժամով և դասացուցակում այն տեղադրված է 3-րդ ժամին:

Հետազոտական աշխատանքը իրականացվել է 5 աշակերտների համար, որոնց պայմանական տվել եմ՝ **A, B, C, D, E**

անվանումները: Յետագոտական աշխատանքի իրականացման **հիմքում** դրված է սովորողների մոտ գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը, հետագոտական աշխատանքի համար ընտրված՝ **խճանկար** մեթոդով:

Նշված մեթոդի ընտրությունը պատահական չէ: Յաշվի առնելով այն հանգամանքը, որ ես չեմ ճանաչել նախորդ ուսումնական տարիներին աշակերտներին, քանի որ չեմ դասավանդել այդ դասարանում, և առարկան աշակերտները նոր են ուսումնասիրում, ես որոշեցի կատարել երկշաբաթյա դիտարկում թե՛ դասաժամերին թե՛ դասերից դուրս:

խճանկար մեթոդի ընտրության համար հիմք են հանդիսացել .

- 1) Դիտարկվող աշակերտների ազատ շփումը և համագործակցությունը դասընկերների հետ:
- 2) Այլ առարկաների դասաժամերին դասընկերներին օգնելու պատրաստակամությունը:
- 3) Միմյանց օգնելու, միասին աշխատելու կարողությունը:

Յետագոտության արդյունքում, խճանկար մեթոդի կիրառմամբ նպատակ ունեւմ դիտարկվող աշակերտների մոտ ապահովել աշխարհագրական գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույն պահանջով յուրացումը, զարգացնելով աշակերտների տրամաբանական մտածողությունը, ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողությունը:

3.2. Փորձարարական դասեր

3.2.1 Փորձարարական դաս 1

Այս օրվա դասի թեման է ,Աֆրիկա. աշխարհագրական դիրքը, ակազիծը, ռելիեֆը, դաս 7 (դասապլանը տեղադրված է հավելված բաժնում): Դասաժամը սկսվեց ողջույնով, հաճախումների ստուգումով (2 բացակա), ստուգվեցին և քննարկվեցին նաև տնային աշխատանքները: Այնուհետև կատարվեց հարցերի ուղղում աշակերտներին, որին հաջորդեց բոլոր հնչած պատասխանների գրառում գրատախտակի վրա, առանց մեկնաբանության: Դասարանը բաժանվեց 5 խմբերի: Հետագոտվող յուրաքանչյուր աշակերտներառվեց մեկ խմբի մեջ, խմբերին տրվեցին համարներ և ընտրվեցին ավագներ: Կազմվեցին փորձագիտական խմբեր, որտեղ յուրաքանչյուր աշակերտ ուներ իր հստակ դերը: Խմբերում ներառված էին և՛ բարձր և՛ միջին ու ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ: Խմբերից յուրաքանչյուրը ստացավ դասի իր հատվածը և սկսվեց դասի քննարկումը: Խմբերի փորձագետները դասի իրենց հատված սովորեցնում էին խմբի աշակերտներին, որին գուցա հեռ խմբերի անդամները կատարում էին նշումներ, ուրվագծային քարտեզների վրա գրառումներ: 1-ին խմբում

Ներառված հետազոտվող **,A** աշակերտը ընդգծում էր դասի իր հատվածից կարևոր բառերը: 2-րդ խմբում ներառված **,B** հետազոտվող աշակերտը կատարում էր նշումներ ուրվագծային քարտեզի վրա: 3-րդ և 4-րդ խմբերում ներառված **,C** և **,D** հետազոտվող աշակերտները ակտիվորեն մասնակցում էին քննարկումներին և խնդրում էին ավագներին որպեսզի ավելի մատչելի բացատրի նյութը: 5-րդ խմբում ներառված **E** հետազոտվող աշակերտը գծապատկերում էր նյութը: Այնուհետև աշխատանքի հաջորդ փուլում խմբերի **փորձագետները** սկսեցին իրենց հատվածները սովորեցնել հենակետային խմբի մյուս անդամներին: Այս փուլում ևս հետազոտվող աշակերտների ակտիվորեն ներգրավված էին դասապրոցեսին: Աշխատանքի հաջորդ փուլում արդեն խմբերը հստակեցրեցին իրենց գաղափարները, քննարկումները ավարտեցին և պատասխանելով ուսուցչի հարցադրումներին սկսեցին լրացնել ուսուցչի կողմից կազմված թեստը՝ անհատապես (տես հավելված):

Վերջում կատարվեց դասի ամփոփում և աշակերտները լուսակիր մեթոդի միջոցով նըրակայ ցրեցին նյութի յուրացման մակարդակը: Տրվեց տնային հանձնարարություն: Դասին հետազոտվող աշակերտները գնահատվեցին միավորային գնահատականներով (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 5

A	B	C	D	E
5	5	4	5	4

Հետազոտվող աշակերտների միավորային գնահատականները փորձարարական 1-ին դասի ավարտին:

Փորձարարական 1-ին դասի ավարտին հետազոտվող աշակերտները կարողացան.

- Տույց տալ Աֆրիկա մայրցամաքը քարտեզի վրա (A, B, C, D, E, հետազոտվող աշակերտներ):
- Բացատրել Աֆրիկա մայրցամաքի ամենատաքը լինելու 1 պատճառ (A, B, D, հետազոտվող աշակերտներ):

3. Ներկայացնել Աֆրիկայի ամենաբարձր կետը և խոշոր կղզին (A, B, D, հետազոտվող աշակերտներ):

3.2.2 Փորձարարական դաս – 2

Այս օրվա դասի թեման է ,Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը, դաս 8 (տես դասապլան 2, հավելված բաժին): Դասը սկսվեց ավանդական դարձած ուսուցչի ողջույնի խոսքով և հաշվառմամբ (1 բացակա աշակերտ): Քննարկվեցին նախորդ դասին հանձնարարված տնային աշխատանքները: Տնային աշխատանքները ուրվագծային քարտեզներով աշխատանք էր, և պատահականության սկզբունքով գրատախտակի մոտ հրավիրվեց ,**Ե** հետազոտվող աշակերտը իր տնային աշխատանքով: Ուղղված հարցին աշակերտը կարողացավ պատասխանել և՛ բանավոր և՛ քարտեզի վրա ցույց տալով(Ո՞րն է Աֆրիկայի ամենաբարձր կետը):

Դասը սկսվեց հարցադրումներով(Ի՞նչ է կլիման), որին հաջորդեցին աշակերտների պատասխանները, որոնք գրի առնվեցին գրատախտակին, առանց մեկնաբանության: Դասարանը բաժանվեց 5 խմբի, յուրաքանչյուր խմբի տրվեցին դասի առանձին հատվածներ ուսումնասիրության համար: Փորձագիտական խմբերում աշակերտները աշխատում էին համագործակցելով միմյանց և խմբի փորձագետի հետ: Աշխատանքը սկսվեց հենակետային խմբերում: Հատկանշական է, որ հենակետային խմբերում աշխատելու ժամանակ, երբ փոխվեցին խմբերի փորձագետները, նոր խմբերում բացատրելով դասը 1-ին և 5-րդ խմբերում գտնվող հետազոտվող ,**Ա** և ,**Ե** աշակերտները սկսեցին դասի իրենց խմբի հատվածները պատմել ինքնուրույն նոր փորձագետներին: Խմբերի աշխատանքներից հետո, այն հարցերին, որոնց փորձագետները չէին կարողացել

պատասխանել ինքնուրույն, պատասխանեց դրանց ուսուցիչը: Աշխատանքի ավարտից հետո անհատական թեստային առաջադրանք հանձնարարվեց աշակերտներին (տես հավելված):

Թեստային աշխատանքի ավարտին հաջորդեց դասին երկայացուցիչ գրատախտակի մոտ, քարտեզի միջոցով: Դասի ավարտից հետո աշակերտները լրացրեցին ելքի քարտեր: Դասին գնահատվեցին 9 աշակերտ՝ ըստ առաջադիմության: Միավորային գնահատական ստացան բոլոր հետազոտվող աշակերտները (տես աղյուսակ 5):

Աղյուսակ 6

A	B	C	D	E
6	5	5	5	5

Հետազոտվող աշակերտների միավորային գնահատականները փորձարարական 2-րդ դասի ավարտին:

Փորձարարական 2-րդ դասի ավարտին հետազոտվող աշակերտները կարողացան.

1. Ներկայացնել ԱՖրիկայի կլիմայական 3 գոտի և ցույց տվեցին քարտեզի վրա (A, B, C, D, E հետազոտվող աշակերտներ):
2. Ներկայացրեցին ԱՖրիկայի ամենաերկար և ամենաշրառատ գետերը և ցույց տվեցին քարտեզի վրա (A, B, C, D, E հետազոտվող աշակերտներ):
3. Կարողացան նշել և գնել քարտեզի վրա ԱՖրիկայի ամենախոնավ վայրը (A հետազոտվող աշակերտներ):

3.2.3 Փորձարարական դաս – 3

Այսօրվա դասի թեման է ,Բնական զոնաները: Սավանաների զոնայի բնութագիրը, դաս 9(տա դասապլան 3 հավելվածներ): Դասը սկսվեց ուսուցչի ողջույնի խոսքով, հաշվառմամբ (բացականեր չկաին): Տնային աշխատանքների ստուգումը զուգակցվեց քարտեզագրական մրցույթով, որին մեծ պատրաստակամությամբ հայտնեցին մասնակցել հետազոտվող աշակերտներ՝ ,A, B, Dե -ն: Կազմվեցին 3 զույգեր և սկսվեց մրցույթը: ,Bե և ,Dե հետազոտվող աշակերտների մրցակիցները նտրվեցին միջին առաջադիմության ունեցող աշակերտներ, իսկ ,Aե հետազոտվող աշակերտի մրցակիցը բարձր

առաջ ադիմումները ունենացող աշակերտեր: Ստացվեց այնպես, որ
Ա հետազոտվող աշակերտը միավորով զիջեց մրցակցին, սակայն
 կարողացավ քարտեզի վրա ցույց տալ և պատասխանել 2 հարցի,
 որոնց սխալ պատասխանեց մրցակիցը:

Դասի հաջորդ փուլը սկսվեց հարցադրումով, որի ժամանակ
 աշակերտների բոլոր պատասխանները առանց մեկնաբանության
 գրի առնվեցին գրատախտակին:

Կազմվեցին 5-ական 4 հոգանոց փորձագիտական խմբեր:
 Յուրաքանչյուր խումբ սկսեց իր հատվածի ուսումնասիրումը,
 նախքան խմբերի համար ավգներ ընտրելը **Ա** հետազոտվող
 աշակերտը, ով այս անգամ ներառված էր 4-րդ խմբում, ոտքի
 կանգնեց և խնդրեց իրեն տալ ավագի (փորձագետի)
 պարտականությունը, որը ընդունվեց ուսուցչի և խմբի
 անդամների կողմից:

Աշխատանքները սկսվեցին հենակետային խմբերում, բոլորը
 կատարեցին գրառումներ և անհասկանալի հարցերը ուղղեցին
 փորձագետներին:

Դասի հաջորդ փուլում կատարվեց ավարտական ստուգողական
 աշխատանքի հանձնարարում՝ ուրվագծային քարտեզի վրա գրել 3
 բնական գոնայի տարածում: Վերջում աշակերտները
 պատասխանեցին հնչած հարցերին և դասն ավարտվեց
 միավորային գնահատմամբ և խրախուսանքով: Միավորային
 գնահատական ստացան բոլոր հետազոտվող աշակերտները (տես
 աղյուսակ 6):

Աղյուսակ 7

A	B	C	D	E
7	5	6	5	6

Հետազոտվող աշակերտների միավորային գնահատականները փորձարարական 3-
 րդ դասի ավարտին:

Փորձարարական 3-րդ դասի ավարտին հետազոտվող աշակերտները
 կարողացան .

1. Կապ գտնել ուսումնասիրվող և նախորդ նյութերի հետ (A հետազոտվող աշակերտ) :
2. Կարողացան բնութագրել իրենց ցանկությամբ 2 բնական զոնա (A, C, E, հետազոտվող աշակերտներ):
3. Կարողացան ցույց տալ քարտեզի վրա սավանաների բնական զոնան (A, B, C, D, E, հետազոտվող աշակերտներ):

Եզրակացություններ

Աշակերտների գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը ապահովելու համար՝ անցկացվեցին 3 փորձարարական դասեր: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում այն աշակերտներին, որոնք գիտելիքի և կարողությունների պարտադիր նվազագույն պահանջների յուրացման հետ կապված ցայտուն արտահայտված խնդիրներ ունեին: Փորձարարական 3 դասերից հետո եկա այն **Եզրակացությունը**, որ

- 1) Աշխարհագրության դասաժամերին ավելի արդյունավետ է կիրառել ուսուցման ժամանակակից այնպիսի մեթոդներ, որոնք կխթանեն սովորողների մոտ հետաքրքրության ավելացմանը:
- 2) Տալով յուրաքանչյուր աշակերտին դասարանում, դասաժամին որոշակի դեր, էլ ավելի է մեծանում աշակերտի հետաքրքրությունն ու ներգրավվածությունը դասին:
- 3) Կարևոր է գնահատման համակարգը: Միավորային և ձևավորող գնահատման իրար փոխլրացնող տեսակների կիրառումը դասաժամին դասապրոցեսը դարձրնում է ավելի ճկուն, դասաժամը ավելի ապահով:
- 4) Աշակերտների հաջողությունները աննդհատ շեշտադրելը մեծացնում է հաջորդ փուլերում աշակերտի պատասխանատվությունն ու պատրաստակամությունը:
- 5) Աշակերտների համագործակցությունը դասընկերների հետ, միմյանց օգնելու կարողությունը դրական է ազդում առարկայի յուրացման որակի վրա:

Իմ կողմից անցկացրած փորձարարական 3 դասերից հետո ունեմ հետևյալ **առաջարկությունները**.

- 1) Ուսումնական գործընթացում առկա ցանկացած խնդիր պետք է լուծել համակարգված գործողությունների, դիտարկումներից մինչև հետազոտության իրականացում (անհրաժեշտության դեպքում) շղթայով:
- 2) Կիրառել հնարավորինս շատ նորագույն մեթոդներ, աշակերտական տրոն ուսուցում կազմակերպել ու համար:
- 3) Դասացուցակում դասաժամը լինի այնպիսի տեղում, որ աշակերտների հիշողությունը և ուշադրությունը լինի կենտրոնացած:
- 4) Դասի ներկայացման ժամանակ շեշտադրել տվյալ առարկայի գիտելիքի և կարողությունների կարևորությունը առօրյակյանքում:
- 5) Լիմել համբերատար, լսել մինչև վերջ աշակերտներին և խթանել նրանց ստեղծագործական մտածողությունը:

Յետազոտական աշխատանքի ավարտից հետո ներկայացնում եմ նաև **Swot** վերլուծություն:

Աղյուսակ 8

Դրական կողմեր	Բացասական կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Խթանեց աշակերտների հետաքրքրությունը: 2. Աշակերտները կարողացան յուրացնել գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույնը ըստ չափորոշի: 3. Կիրառված մեթոդը նորություն էր աշակերտների համար և նպատակային էր ընտրված: 	<ol style="list-style-type: none"> 1. Ժամանակի սղությունը: 2. Աշակերտների մեծ հետաքրքրության և ժամանակի անհամապատասխանությունը:
Ջնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Բացահայտել աշակերտների 	<ol style="list-style-type: none"> 1. Դասացուցակում առարկայի տեղը:

<p>կարողությունները:</p> <p>2. Հասկանալ աշակերտներին յուրովի:</p> <p>3. Կազմակերպել ուսուցում աշակերտներին կարողություններին համապատասխան:</p>	<p>2. Դասաժամին հնարավոր աղմուկի առկայությունը:</p>
--	---

Այսպիսով հետազոտական աշխատանքի ավարտին հետազոտվող աշակերտները կարողացան գրանցել աճ, ապահովել առարկայի գիտելիքների և կարողությունների պարտադիր նվազագույն մակարդակի յուրացումը ընտրված նպատակային մեթոդի միջոցով:

Օգտագործված գրականություն և ցանկ

- 1) Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008թ
- 2) Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր` <<Աշխարհագրություն և նշանակություն>>
- 3) Սարգսյան Խ.Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, էջ 39-57 5.Մինասյան Ա.Ա. , Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա էջ 82-87
- 4) Խաչատրյան, Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան 2020

5) Խաչատրյան Մ., Դավթյան Մ. Դասավանդման
 Ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Երևան
 2019

ՀԱՎԵԼՎԱՃՆԵՐ
ԴԱՍԱՊԼԱՆ - 1

Ուսուցիչ՝ Աննա Հարությունյան

Հավելված 1

Առարկա՝	Աշխարհագրություն	Ամսաթիվ	Կիսամյակ	Դասարան	6 ա
Թեմա՝	,Աֆրիկա աշխարհագրական դիրքը, ախաբիծը, ռելիեֆը, դաս 7				

Օգտագործվող նյութեր՝	6-րդ դասարանի աշխարհագրության դասագիրք, քարտեզ, տետրեր, մարկերներ, կաշու նախադասարան, գրիչներ, ուրվագծային քարտեզներ:
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> • Ներկայացնել Աֆրիկայի աշխարհագրական դիրքը, ախագիծը, ռելիեֆը: • Ներկայացնել և քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկա մայրցամաքի ծայրակետերը, բարձր և ցածր կետերը: • Բացատրել Աֆրիկայի որպես ամենատաք մայրցամաքը ինչու և պատճառները: • Քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկա մայրցամաքի խոշոր էնոսագրական միավորները:

Ուսուցման արդյունքներ, որոնք կվաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա <ul style="list-style-type: none"> • ներկայացնել Աֆրիկա մայրցամաքի աշխարհագրական դիրքը քարտեզի օգնությամբ: • Բացատրել Աֆրիկա մայրցամաքի ամենատաքը լինելու պատճառները: • քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկայի ամենաբարձր և ամենացածր կետերը: • Քարտեզի օգնությամբ գտնել և ուրվագծային քարտեզի վրա նշել խոշոր էնոսագրական միավորները: 			
Գործողություններ/ ժամ/ տևողություն/	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ/
Մուտք, ներկաբացակա/3ր/		Հաշվառում, տնային աշխատանքների ստուգում:		
Սկիզբ /5-7ր/	Աշակերտները ստուգվեն,	Ուսուցիչը	Ի՞նչ գիտեք Աֆրիկա	Մտադրոհ

<p>Ընթացք /25-30ր/</p>	<p>մտածում տրված հարցի մասին, հիշում են և պատասխանում են հարցին:</p> <p>Խմբի 1-ին համարները հավաքվում են մեկ սեղանի շուրջ, 2-ները՝ ալ, 3-ները, 4-երը, 5-երը՝ մեկ ալ սեղանների շուրջ: Դրանք կոչվում են փորձագիտակ և խմբեր:</p> <p>Աշակերտները աշխատում են հիմնական խմբերում, կատարում են նշումներ, և ևրացնում են ուրվագծային քարտեզներ, այնուհետև խմբերի համարը նորված փորձագետները փոխվում են,</p>	<p>գրի է առնում գրատախտակի նայնամենը, ինչը ասվում է աշակերտների կողմից՝ առանց վերլուծության և ևրացուցիչ մեկնաբանության:</p> <p>Դասը բաժանում է 5 մասերի: Յուրաքանչյուր մաս տալիս է 1 խմբի (4 հոգանոց 5 խումբ) յուրաքանչյուր խումբ ստանում է իր հերթական համարը՝ 1, 2, 3, 4, 5: Հետագոտվող աշակերտները ներառվում են խմբերում:</p> <p>Հանձնարարվում է, որ 1-ին խմբի բոլոր</p>	<p>մայրցամաքի մասին:</p> <p>Ո՞րն է ԱՖրիկային ամենամոտ մայրցամաքը:</p> <p>Ինչպիսի՞ աշխարհագրական դիրք ունի ԱՖրիկա մայրցամաքը:</p> <p>Ո՞րն է ԱՖրիկայի ափերի մոտ գտնվող ամենամեծ կղզին:</p>	<p>Խճանկար մեթոդ:</p>
-------------------------------	---	--	--	-----------------------

	<p>յ ու ը ր ա ք ա ն չ յ ու ը ր փ ո ղ ա գ է տ հ ե ն ա կ է տ ա յ ի ն խ մ բ ի մ յ ու լ ս ա ն դ ա մ ն ե թ ի ն ս ո Վ ո ղ ր ե ց ն ու մ է ի ղ ե ն թ ա թ է մ ա ն : , Ու ն կ ն դ ի ղ ր ն ե ղ ր ը ե ի ղ ե ն ց ա ն հ ա ս կ ա ն ա լ ի հ ա ր ց ե ղ ն է ն ու ղ ղ ու մ փ ո ղ ա գ է տ ն ե ղ ի ն :</p> <p>խ մ բ ե ղ ը ն ե ղ կ ա յ ա ց ն ու մ է ն դ ա ս ը , ու ը ղ ա գ ծ ա յ ի ն ք ա ր տ ե գ ն ե ղ ի մ ի ջ ո ց ո ղ կ ա տ ա ր ղ ա ծ ա շ խ ա տ ա ն ք ն ե ղ ը ն ու ս ու լ ց չ ի ն է ն ու ղ ղ ու մ ա յ ն ա ն հ ա ս կ ա ն ա լ ի հ ա ր ց ե ղ ը , ո ղ ո ն ց չ է ն ա պ ա տ ա ս խ ա ն է լ խ մ բ ե ղ ի</p>	<p>ա ն դ ա մ ն ե ղ ր ն ի ն ք ն ու ը ղ ու յ ն ս ո Վ ո ղ ր ե ն ն հ ա մ ա տ ե ղ ք ն ն ա ր կ է ն դ ա ս ի , Ա շ խ ա ր հ ա գ ղ ա կ ա ն դ ի ղ ր ք ը ե հ ա տ ղ ա ծ ը , 2-ր դ խ մ բ ի ա ն դ ա մ ն ե ղ ը , Ա փ ա գ ի ծ ը ե հ ա տ ղ ա ծ ը , 3-ր դ խ ու մ բ ը , Ա Ֆ ղ ի կ ա յ ի ս ա ր ա հ ա ր թ ե ղ ը ե , 4-ր դ խ ու մ բ ը , Ա Ֆ ղ ի կ ա յ ի լ է ո ն ա գ ղ ա կ ա ն խ ո շ ո ղ մ ի ա ղ ո ղ ր ն ե ղ ը ե , 5-ր դ խ ու մ բ ը , Ա Ֆ ղ ի կ ա յ ի ո շ է լ ի է Ֆ ի դ ղ ա կ ա ն ն ա ր ց ա ս ա կ ա ն ձ ն ե ղ ը ե հ ա տ ղ ա ծ ն ե ղ ը :</p> <p>Ու ս ու լ ց չ ի ը ն տ ղ ու թ յ ա մ բ խ մ բ ի ո ղ ո շ ա ն դ ա մ ն ե ղ պ ա տ մ ու մ է ն դ ա ս ի առ ա ն ձ ի ն հ ա տ ղ ա ծ ն ե ղ ը :</p>	<p>Ո՞ր ն է Ա Ֆ ղ ի կ ա յ ի ա մ է ն ա մ է ծ ա ն ա պ ա տ ը : Ի՞նչ ու է Ա Ֆ ղ ի կ ա ն հ ա մ ա ր ղ ու մ ս ա ր ա հ ա ր թ ե ղ ի մ ա յ ղ ց ա մ ա ք : Չ ա փ ա ն ի շ ն ե ղ ,</p> <ul style="list-style-type: none"> • Գ ղ ա գ է տ շ ա ր ա դ ղ ր ա ն ք • Ք ա ր տ ե գ ի ց ճ ի շ տ ո գ տ ղ է լ • Տ ղ ա մ ա ք ա ն ղ ա ծ խ ո ս ք • Ու ղ ղ ա գ ծ ա յ ի ն ք ա ր տ ե գ ի ղ ղ ա առ ն ղ ղ ա ղ ն 4 լ է ո ն ա գ ղ ա կ ա ն մ ի ա ղ ո ղ ի առ ա ն ձ ն ա ց ու մ : 	<p>Չ ա ր ց ա դ ղ ր ու մ ն ե ղ</p>
--	--	---	--	-----------------------------------

<p>Ավարտ/5ր/</p>	<p>փորձագետները :</p> <p>Աշակերտները դասը հասկացած էինեւ ու դեպքում բարձրացնում են կանաչ գույնի և ուսակիրը, մասնակի հասկանալու դեպքում՝ դեղին, իսկ չհասկացած էինեւ ու դեպքում՝ կարմիր և ուսակիրը :</p>	<p>Ուսուցիչը ստուգում է նյութի յուրացման մակարդակը թեստային առաջադրանքի միջոցով, որից հետո ամփոփում է դասը և ուսակիր-ի մեթոդով :</p>	<p>Աշակերտները գնահատվում են ըստ առաջադիմության :</p>	<p>Լ ու ս ա կ ի ռ մ ե թ ո դ թ է ս տ ա յ ի ն առ ա ջ ա դ ի ր ա ն ք :</p>
<p>Տնային աշխատանք 3ր</p>	<p><i>Տնային առաջադրանքի հանձնարար հ.6, էջ 40:</i></p>			

ԴԱՍԱՊԼԱՆ – 2

ՈԼՍՈԼԳԻՋ՝ ԱՆՆԱՅԱՐՈԼԹՅՈՒՆՆԵՐ

Յավելված 2

Առարկա՝	Աշխարհագրություն	Ամսաթիվ		Կիսամյակ		Դասարան	6 ա
Թեմա՝	,Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը, դաս 8						
Օգտագործվող նյութեր՝	6-րդ դասարանի աշխարհագրության դասագիրք, քարտեզ, տետր, մարկերներ, կաշու թղթեր, գրիչներ, ուրվագծային քարտեզներ:						
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> • Վերլուծել Աֆրիկայի կլիման ձևավորող հիմնական գործոնները: • Բացատրել և քարտեզի վրացույց տալ կլիմայական գոտիները և մարզերը: • Ներկայացնել ջրագրական ցանցի առանձնահատկությունները: 						

ՈԼՍՈԼԳՄԱՆ արդյունքներ, որոնք կվաստեն, որ ոլսոլցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա <ul style="list-style-type: none"> • Ցույց տալ կլիմայական գոտիները և մարզերը ուրվագծային քարտեզի վրա և ֆիզիկական քարտեզի վրա: • Ցույց տալ Աֆրիկայի խոշոր գետերը և լճերը քարտեզի վրա: • Բացատրի Աֆրիկայի ջրագրական ցանցի նշանակությունը: 				
Գործողություններ/ժամ/տևողություն/	Ոլսոլմնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ոլսոլմնական գործունեություն <i>Ոլսոլցի</i>	Յարցարումներ	Կիրառվող մեթոդներ/	
Մուտք, ներկա					

<p>բացակա/3ր/</p>		<p>Հաշվառում, տնային աշխատանքներ ի ստուգում:</p>		<p>Մտագրոհ</p>
<p>Սկիզբ /5-7ր/</p>	<p>Աշակերտները լսում են, մտածում տրված հարցի մասին, հիշում են և պատասխանում են հարցին:</p>	<p>Ուսուցիչը գրի է առնում գրառախտակի նայնամենը, ինչը ասվում է աշակերտներ ի կողմից՝ առանց վերլուծության և լրացուցիչ մեկնաբանու թյան:</p>	<p>Ի՞նչ է կլիմայական գոտին:</p>	
<p>Ընթացք /25-30ր/</p>	<p>Խմբի 1-ին համարները հավաքվում են մեկ սեղանի շուրջ, 2-ները այլ, 3-ները, 4- երը, 5-երը՝ մեկ այլ սեղանների շուրջ: Դրանք կոչվում են փորձագիտական խմբեր:</p>	<p>Դասը բաժանում է 5 մասերի: Յուրաքանչյու րում 1 խմբի (4 հոգանոց 5 խումբ) յուրաքանչյու րում խումբ ստանում է իր հերթական համարը՝ 1, 2, 3, 4, 5: Հետագոտվող աշակերտներ ը ներառվում</p>	<p>Ո՞րն է ԱՖրիկայում հասարակածի մոտ գտնվող կլիմայական գոտին: Ո՞րն է ԱՖրիկայի ամենախոնավ վայրը և ինչն է: Ո՞ր քամիների դերն է մեծ ԱՖրիկայի կլիմայի ձևավորման վրա: Ո՞րն է</p>	<p>Խճանկար մեթոդ Հարցադրում ներ Թեստային</p>

	<p>Աշակերտները աշխատում են հիմնական խմբերում, կատարում են նշումներ, Լրացնում են ուրվագծային քարտեզներ, այնուհետև խմբերի համարը նորված փորձագետները փոխում են, յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է նթաթեման: ,Ունկնդիրները են հրեց անհասկանալի հարցերն են ուղղում փորձագետներին:</p>	<p>Են խմբերում:</p> <p>Չանձնարարվում է, որ 1-ին խմբի բոլոր անդամներն ինքնուրույն սովորեն և համատեղ քննարկեն դասի ,Կլիմայական գործունեություն հատվածը, 2-րդ խմբի անդամները՝ , Չասարակածալիս և մերձհասարակածային կլիմայական գոտիներե հատվածը, 3-րդ խումբը՝ ,Արևադարձային և մերձարևադարձային կլիմայական գոտիներե,</p>	<p>Աֆրիկայի ամենաերկար գետը:</p> <p>Ո՞րն է Աֆրիկայի ամենաշրտառ գետը:</p> <p>Չափանիշներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Գրագետ շարադրանք • Քարտեզի ցճիչ տօգտվել • Տրամաբանված խոսք • Ուրվագծային քարտեզի վրա առնվազն 4 Լեռնագրական միավորի առանձնացում: 	<p>առաջադրանք:</p>
--	--	--	--	--------------------

	<p>Խմբերը ներկայացնում են դասը, ուրվագծային քարտեզների միջոցով կատարված աշխատանքները և ուսուցչին են ուղղում այն անհասկանալի հարցերը, որոնց չեն պատասխանել խմբերի փորձագետները :</p>	<p>4-րդ խումբը՝ ,Աֆրիկայի ջրագրական ցանցի առանձնահատ կույթուններ ընդ, 5-րդ խումբը՝ ,Գետերը, լճերը հատվածները :</p> <p>Ուսուցչի ընտրությամբ բխմբի որոշ անդամներ պատմում են դասի առանձին հատվածներ :</p>	<p>Խմբերը լրացնում են էլ քի քարտեր : Ի՞նչ սովորեցի Ի՞նչը կտանեմ ինձ հետ : Ի՞նչն էր անհասկանալի :</p> <p>Աշակերտները գնահատվում են ըստ</p>	<p>Էլ քի քարտեր</p>
<p>Ավարտ/5ր/</p>	<p>Խմբերը ներկայացնում են իրենց հանձնարարված հատվածները, լսում են մյուս խմբերին և կատարում են ընդհանրացում :</p>	<p>Ուսուցիչը ստուգում է նյութի յուրացման մակարդակը թեստային առաջադրանք ի միջոցով, որից հետո կատարում է անդրադարձ :</p>	<p>Աշակերտները գնահատվում են ըստ</p>	<p>Էլ քի քարտեր</p>

			առաջ ադիմումների յան:	
Տնային աշխատանք 3ր	<i>Տնային առաջ ադրանքի հանձնարարում հ.7, էջ 47:</i>			

ԴԱՍԱԴՐԱՆ – 3

Ուսուցիչ՝ ԱննաՅարուհյունյան

Հավելված 3

Առարկա՝	Աշխարհագրություն	Ամսաթիվ	Կիսամյակ	Դասարան	6 ա
Թեմա՝	Բնական զոնաները: Սավանաների զոնայի բնութագիրը, դաս 9				
Օգտագործվող նյութեր՝	6-րդ դասարանի աշխարհագրություն դասագիրք, քարտեզ, տետրեր, մարկերներ, կաշու նախադաս, գրիչներ, ուրվագծային քարտեզներ:				
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> Բացատրել Աֆրիկայի տարածքի բնական զոնաների տարածման առանձնահատկությունները: Ներկայացնել յուրաքանչյուր բնական զոնայի հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը և կլիման: Ներկայացնել Աֆրիկայում ամեմամեծ տարածում ունեցող սավանաների բնական զոնայի բնութագիրը: 				

Ուսուցման արդյունքներ, որոնք կվաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա <ul style="list-style-type: none"> Ցույց տալ բնական զոնաների տարածումը ուրվագծային քարտեզի և ֆիզիկական քարտեզի վրա: Ներկայացնել Աֆրիկայի սավանաների բնական զոնայի յուրաքանչյուր հիմնախնդիրները: Ներկայացնել յուրաքանչյուր բնական զոնային բնորոշ կենդանատեսակ և բուսատեսակ:
-------------------------	---

Գործողություններ ր/ժամ/ տևողություն/	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ/
<p>Մուտք, ներկա- բացակա/3ր/</p> <p>Սկիզբ /5-7ր/</p> <p>Ընթացք /25-30ր/</p>	<p>Աշակերտները լսում են, մտածում տրված հարցի մասին, հիշում են և պատասխանում են հարցին:</p> <p>Խմբի 1-ին համարները հավաքվում են մեկ սեղանի շուրջ, 2-ները այլ, 3-ները, 4- երը, 5-երը` մեկ այլ սեղանների շուրջ: Դրանք կոչվում են փորձագիտական խմբեր:</p>	<p>Հավանում, տնային աշխատանքներ ի ստուգում: Քարտեզագրա- կան մրցույթ:</p> <p>Ուսուցիչը գրի է առնում գրատախտակի նայնամենը, ինչը ասվում է աշակերտներ ի կողմից` առանց վերլուծությ- ան և լրացուցիչ մեկնաբանու- թյան:</p> <p>Դասը բաժանում է 5 մասերի: Յուրաքանչյ- ուր մաս տալիս է 1 խմբի (4 հոգանոց 5 խումբ) յուրաքանչյ- ուր խումբ ստանում է իր հերթական համարը` 1, 2, 3, 4, 5:</p>	<p>Ի՞նչ է բնական զոնան: Ի՞նչ բնական զոնաներ գիտեք:</p>	<p>Մտադրոհ</p>

	<p>Աշակերտները աշխատում են հիմնական խմբերում, կատարում են նշումներ, Լրացնում են ուրվագծային քարտեզներ, այնուհետև խմբերի համարը նորված փորձագետները փոխվում են, յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է նթաթեման: ,Ունկնդիրները ե հրենց անհասկանալի հարցերն են ուղղում փորձագետներին:</p>	<p>Հետագոտվող աշակերտները ներառվում են խմբերում:</p> <p>Հանձնարարվում է, որ 1-ին խմբի բոլոր անդամներն ինքնուրույն սովորեն և համատեղ քննարկեն դասի ,Աֆրիկայի բնական գոնաների բնութագրի հատվածը, 2-րդ խմբի անդամները՝ ,Հասարակածային խոնավ մշտադալար անտառներե հատվածը, 3-րդ խումբը՝ ,Անապատներ և կիսանապատներ, 4-րդ խումբը՝ ,Մերձարևադարձային մշտական աչկոշտատեր և անտառներ և թփուտներ, 5-րդ խումբը՝ ,Սավանաներ և նոսր անտառ</p>	<p>Ո՞ր բնական գոնան է ամենամեծը՝ Աֆրիկայում:</p> <p>Ո՞ր բնական գոնայի բուսատեսակ է վելվիչան:</p> <p>Ինչու՞ Աֆրիկայում չկան սպիտակ արջեր:</p> <p>Չափանիշներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Գրագետ շարադրանք • Քարտեզի ցճիշտ օգտվել • Տրամաբանված խոսք • Ուրվագծային քարտեզի վրա առնվազն 4 Լեռնագրական միավորի առանձնացում: 	<p>Խճանկար մեթոդ</p> <p>Հարցադրումներ</p>
--	---	---	--	---

	<p>Խմբերը ներկայացնում են դասը, որովագծային քարտեզների միջոցով կատարված աշխատանքները և ուսուցչին են ուղղում այն անհասկանալի հարցերը, որոնց չեն պատասխանել խմբերի փորձագետները :</p>	<p>Երե հատվածները :</p> <p>Ուսուցչի ընտրությամբ խմբի որոշ անդամներ պատմում են դասի առանձին հատվածներ :</p>	<p>Խմբերը լրացնում են միմյանց քարտային մեթոդով ուղղելով հարցեր :</p>	
<p>Ավարտ/5ր/</p>	<p>Խմբերը ներկայացնում են հրենց հանձնարարված հատվածները, լսում են մյուս խմբերին և կատարում են ընդհանրացում :</p>	<p>Ուսուցիչը ստուգում է նյութի յուրացման մակարդակը քարտային մեթոդի միջոցով : Համարակալված գունավոր թղթերով քարտերը դնում է սեղանին ամեն աչտերտ գալիս :</p>	<p>Աչտերտները գնահատում են ըստ առաջադիմության :</p>	<p>Քարտային մեթոդ (գունավոր թղթեր) :</p>

		<p>ընտրում է իր նախնարած գույնով քարտը, որից հետո ինչ թիվ գրված եղավ քարտի վրա այդ համարի աչակերտն էլ ոտքի է կանգնում և պատասխանում այն աչակերտի տված հարցին ով վերցրել է քարտը:</p>		
<p>Տնային աշխատանք 3ր</p>	<p><i>Տնային առաջադրանքի հանձնարարում հ. 4, էջ 52:</i></p>			

Թեստային աշխատանք 1
Փորձարարական դաս 1

Յավելված 4

1. Որքա՞ն է Աֆրիկամայրցամաքի տարածքը:

2. Ո՞րն է Աֆրիկայի ամենաբարձր գագաթը:

3. Ո՞րն է Աֆրիկայի ալբերի մոտգտնվող ամենախոշոր կղզին:

Թեստային աշխատանք 2
Փորձարարական դաս 2

Յավելված 5

1. Ո՞րն է Աֆրիկայի ամենախոնավ վայրը:

2. Ո՞ր Լիճ է թափվում Շարի գետը:

3. Ո՞րն է Աֆրիկայի ամենաշրտառոգետը:

4. Ո՞րն է Աֆրիկայի ամենաերկար գետը:

5. Ի՞նչ ու է Աֆրիկամայրցամաքը համարվում ամենաուսքը:

6. Ո՞ր կլիմայական գոտին է Աֆրիկայում տարածվում հասարակածի երկու կողմերում:

7. Ո՞ր քամիներն են մեծ տարածում ունեցողը Աֆրիկամայրցամաքում:
